ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«29» Մայիս 2018թ. N 68-Ա/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 7-ի N 52-Ա/1 ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 14-ի N 1821-Ն որոշմամբ հաստատված ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետև՝ նախարարություն) կանոնադրության 12-րդ կետի «դ» ենթակետը, աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2018 թվականի մայիսի 29-ի հանձնարարականը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2018 թվականի ապրիլի 7-ի «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» պետական ոչ առեվտրային կազմակերպության տնօրենի ընտրության (նշանակման) բաց մրցույթ անցկացնելու մասին N 52-Ա/1 հրամանը:
2. Նախարարության աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել վերոնշյալ կազմակերպության տնօրենի ընտրության համար անցկացվող մրցույթի չեղարկման մասին հայտարարության հրապարակումը՝ նախարարարության պաշտոնական կայքէջում և www.azdarar.am հասցեում գտնվող

0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ (374 10) 56 53 83, ֆաքս. (374 10) 52 08 30
http://www.mlsa.am info@mlsa.am

Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում:

3. Նախարարության անձնակազմի կառավարման վարչության պետին՝ ապահովել մրցույթի հայտ ներկայացրած մասնակիցներին մրցույթի չեղարկման և դրա պատճառների վերաբերյալ պատշաճ ծանուցումը:

Մ. ԹԱՆԴԻԼՅԱՆ